Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թվականի
օգոստոսի 5 -ի N 519 - Ա որոշման

ԾՐԱԳԻՐ
«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նալբանդյանի համայնքում բնակելի տների կառուցում»

1.	Ծրագրի նպատակը	Իրականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նալբանդյանի համայնքում թվով 14 նույնատիպ բնակելի տների կառուցման աշխատանքները
2.	Ծրագիրը բարեգործական որակելու նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեգործը	Անհատ բարերարներ (իրավաբանական և ֆիզիկական անձինք)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ, ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան պողոտա 26, ՀՎՀՀ՝ 02507456
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Նալբանդյանի համայնք, բնագավառը՝ բնակարանաշինություն
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 353,188,927 դրամ, որից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նալբանդյանի համայնքում թվով 5 նույնատիպ բնակելի տների (տուն N 1, N 2, N 3, N 4 և N 5) կառուցում՝ 125,961,772 դրամ, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նալբանդյանի համայնքում թվով 5 նույնատիպ բնակելի տների (տուն N 8, N 9, N 10, N 11 և N 12) կառուցում՝ 125,990,810 դրամ, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նալբանդյանի համայնքում թվով 4 նույնատիպ բնակելի տների (տուն N 6, N 7, N 13 և N 14) կառուցում՝ 101,236,345 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նալբանդյանի համայնքի բնակիչներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2019 թ. հուլիսի 20-ից մինչև 2020 թ. մարտի 31-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2019 թ. հուլիսի 20-ից մինչև 2020 թ. մարտի 31-ը ընկած ժամանակահատվածում Արմավիրի մարզի Նալբանդյանի համայնքում նախատեսվում է կառուցել 14 հատ նույնատիպ բնակելի տուն. արժեքը՝ 353,188,927 դրամ
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը,	«N 1 Շինվարչություն» ԲԲԸ-ի կողմից Արմավիրի մարզի Նալբանդյանի համայնքում նախատեսվում է կառուցել 14 հատ նույնատիպ բնակելի տուն՝ 353,188,927 դրամ

	ծավալները և նախատեսվող գինը	
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Արմավիրի մարզպետարանի հետ
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ